

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

25 հունիսի 2018թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաշվետվությունները:
2. Ֆարմացիայի ինստիտուտի կուրատորների հաշվետվությունների քննարկում և հաստատում:
Զեկուցողներ՝ Առկա ուսուցման Ֆարմացիա 1-ին կուրսի կուրատորներ-
Հ. Սիմոնյան, Ս. Պետրոսյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի երիտասարդ աշխատակիցների հաշվետվությունները կատարված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ:
Զեկուցողներ՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ավագ լաբորանտ Անի Չախոյան և լաբորանտ Անի Մկրտչյան
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաշվետվությունները:

Լսեցին՝

- 1.1 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի հաշվետվությունը՝ 2017 - 2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է): Ռ. Հովհաննեսյանը նշեց, որ 2017-2018 ուսումնական տարում ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են հաստատված ուսումնական և աշխատանքային պլանների համաձայն: Նա հավելեց, որ պարբերաբար հրավիրվել են ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացի հետ կապված մի շարք հարցեր, տրվել են համապատասխան հրահանգներ, կազմակերպվել են սեմինարներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների նախնական պաշտպանություններ: Հաշվետու տարում ամբիոնի աշխատակիցների կողմից ղեկավարվել են 11 ավարտական աշխատանքներ և 13 մագիստրոսական թեզեր: Ռ. Հովհաննեսյանը հավելեց նաև, որ «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքում կենսաբժշկագիտության ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,64 միավոր, բոլոր դասախոսների անհատական գնահատականները բարձր են 4,0-ից: 2017-2018 ուս. տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության արդյունքում տպագրվել են 14 գիտական աշխատություններ, որոնցից 7 հոդված (4-ը՝ միջազգային ամսագրերում) և 7 միջազգային գիտաժողովների զեկուցման թեզիսներ: Ռ. Հովհաննեսյանը հավելեց, որ հաշվետու տարում ամբիոնը համագործակցել է ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի, «Աստղիկ» բժշկական կենտրոնի, ՀՀ ԱՆ հանրապետական գիտաբժշկական գրադարանի հետ:
- 1.2 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Հ. Միմոնյանի հաշվետվությունը՝ 2017-2018 ուս. տարում ամբիոնի գործունեության մասին (հաշվետվությունը կցվում է): Նա գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ամբիոնի հաստիքացուցակը, տեղեկացրեց, որ հաշվետու տարում ամբիոնն իր աշխատանքներն իրականացրել է հաստատված

ուսումնական և աշխատանքային պլանների համաձայն, պարբերաբար հրավիրվել են ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական և գիտական գործընթացներին վերաբերվող հարցեր, կազմակերպվել են կուրսային և դիպլոմային աշխատանքների նախնական պաշտպանություններ: Հ Սիմոնյանը հարկ համարեց նշել այն փաստը, որ հաշվետու տարում ամբիոնի աշխատանքներին ներգրավվել են նաև Մ. Հերացու անվան բժշկական համալսարանից հրավիրված դասախոսներ, ովքեր բարձր մակարդակով դասավանդել են «Ֆարմակագնոզիա և հալենային պրեպարատներ» առարկան: Դա արտացոլվել է նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցումներում ուսանողների կողմից արտահայտված կարծիքներում: Հ. Սիմոնյանը նշեց, որ ամբիոնի աշխատակիցների կողմից ընդհանուր առմամբ ղեկավարվել են 18 ավարտական աշխատանքներ և 18 մագիստրոսական թեզեր, սոցիոլոգիական հարցումների արդյունքում ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,77 միավոր: Նա նշեց, որ ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության արդյունքում տպագրվել է 7 գիտական հոդված (որոնցից 4-ը՝ միջազգային բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում) և 7 միջազգային գիտաժողովների զեկուցման թեզիսներ: Հաշվետու ուսումնական տարում ամբիոնն արդյունավետ կերպով համագործակցել է մի շարք գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների հետ՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ, «Լիկվոր», ՌԴ Բելգորոդի պետական հետազոտական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտ, ՌԴ Ա.Ն. Նեամեյանովի անվան Էլեմենտորգանական միացությունների ինստիտուտ, ԳԴ Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոն:

- 1.3** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանի հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է): Ա. Հովհաննիսյանը համառոտ ներկայացրեց ամբիոնի կադրային կազմը, ուսումնամեթոդական գործունեությունը և նշեց, որ ամբիոնն իր աշխատանքները կազմակերպել է հաստատված ուսումնական և աշխատանքային պլանների համաձայն: Նա նշեց, որ ամբիոնը կազմակերպում է նաև ուսանողների

արտադրական և դեղատնային պրակտիկաները «Ալֆա» ֆարմ և «Նատալի» ֆարմ դեղատնային ցանցերում, «Լիկվոր» ԲԲԸ-ում, «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում: Ա. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ամբիոնի աշխատակիցների կողմից ղեկավարվել են 16 ավարտական աշխատանքեր և 18 մագիստրոսական թեզեր, ամբիոնն ունի նաև մեկ ասպիրանտ՝ առկա, անվճար հիմունքով: Հաշվետու ուս. տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտակահետազոտական գործունեության արդյունքում տպագրվել է 5 հոդված, 5 միջազգային գիտաժողովի զեկուցման թեզիսներ, «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքում ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,81 միավոր, բոլորի անհատական գնահատականը բարձր է 4-ից:

Ելույթ ունեցան՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, գիտխորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ս. Պետրոսյանը, ովքեր ևս փաստեցին, որ ուսանողներն իրենց գոհունակությունն ու շնորհակալությունն են արտահայտել պրակտիկաների արդյունավետ կազմակերպման համար:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ ք.գ.թ. Ս. Ափոյանը, ք.գ.թ. դոցենտ Կ. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին դրական գնահատել ամբիոնների վարիչների կողմից կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունները:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել ամբիոնների վարիչների հաշվետվությունները:

2. Ֆարմացիայի ինստիտուտի կուրատորների հաշվետվությունների քննարկում և հաստատում:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցման Ֆարմացիա 1-ին կուրսի կուրատորներ ք.գ.թ. Հ. Սիմոնյանի և ք.գ.թ. Ս. Պետրոսյանի հաշվետվությունը 2017-2018 ուս. տարում կատարված աշխատանքների մասին: Հ. Սիմոնյանը նշեց, որ Ս. Պետրոսյանի հետ մեկտեղ հաշվետու ուսումնական տարում ուսանողներին նախ ծանոթացրել են ուսումնական կիսամյակների կառուցվածքներին, քննությունների կանցկացման կարգերին, գնահատման ձևերին: Կազմակերպվել է շրջայց Ֆարմացիայի ինստիտուտի մասնագիտական

լաբորատորիաներով, ուսանողների հետ իրականացվել է կուրսի և խմբերի ավագների ընտրություն, քննարկել են վարձավճարների հետ կապված հարցեր, կազմակերպվել է ուսանողների բժշկական գնման անցկացումը: Մշակութային միջոցառումների շարքում իրականացվել է այցելություն ԵՊՀ պատմության թանգարան:

Որոշեցին՝ (միաձայն) դրական գնահատել հաշվետու տարում կուրատորների կողմից կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունները:

3. Ֆարմացիայի ինստիտուտի երիտասարդ աշխատակիցների հաշվետվությունները կատարված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ:

Լսեցին՝

3.1.ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի երիտասարդ աշխատակից, ավագ լաբորանտ Անի Չախոյանին, ով ներկայացրեց ընթացիկ տարում իր կողմից կատարված աշխատանքը՝ «Ֆորմուլյարային համակարգը որպես դեղերի արդյունավետ կիրառման գործիք թեմայով»: Ա. Չախոյանը նշեց, որ այս էտապում իր հետազոտության նպատակն է հանդիսացել ֆորմուլյարային համակարգի մասին գրականական վերլուծությունը և դեղերի արդյունավետ կիրառման համար դրա անհրաժեշտության բացահայտումը: Նա հավելեց, որ իր կողմից կատարված աշխատանքների արդյունքում հնարավոր կլինի.

- ստեղծել բժշկական համալիրի ներսում դեղաբուժական կոմիտե,
- իրականացնել տնտեսագիտական և դեղատնտեսագիտական հետազոտություններ՝ դեղերի ֆորմուլյարային ցանկ մշակելու համար,
- վերլուծության համար հավաքագրել բժշկական համալիրի հիվանդների (թվով 50-100) բժշկական քարտեր (1 տարվա կտրվածքով),
- ABC/VEN, հաճախության և ABC/XYZ անալիզի արդյունքներն ամփոփելով ընտրել անվտանգ, որակյալ և ծախս-արդյունավետ դեղեր և կազմել դեղերի ֆորմուլյարային ցանկը,
- ներդնել ֆորմուլյարը բժշկական համալիրում՝ անհրաժեշտության դեպքում սեմինար-քննարկում անցկացնելով բժշկական համալիրի բժիշկների շրջանում,

- անցկացնել սոցհարցում հիվանդների շրջանում (թվով 50-100) որպես լրացուցիչ հետազոտություն,
- ֆորմուլյարի կիրառումից 1 տարի անց իրականացնել դիտարկում՝ սպասվելիք դրական փոփոխությունները արձանագրելու նպատակով:

Ելույթ ունեցան՝ կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Ռ. Հովհաննեսյանը, ում մասնավորապես հետաքրքրում էր, արդյո՞ք Հայաստանում չկան դեղաբուժական կոմիտեներ, ի վերջո ի՞նչ կտա հասարակությանը ֆորմուլյարային համակարգը: Ա. Չախոյանը նշեց, որ ՀՀ-ում չկան դեղաբուժական կոմիտեներ, իր անմիջական ղեկավար դ.գ.թ. Ա. Սահակյանի հետ նպատակ ունեն ստեղծել այդ կոմիտեն, իսկ ֆորմուլյարային համակարգը արդյունավետ մեխանիզմ է, որը թույլ կտա արդյունավետ դարձնել դեղերի կիրառումը, քչացնել դրանց ձեռքբերման ծախսերը և համապատասխանաբար բարձրացնել բնակչությանը դեղորայքային ապահովման որակը:

3.2 Ֆարմաեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի երիտասարդ աշխատակից, լաբորանտ Անի Մկրտչյանին, ով ներկայացրեց իր հետազոտության շրջանակներում կատարված աշխատանքները: Նա մասնավորապես նշեց, որ գիտական հետազոտությունն ուղղված է Հայաստանում աճող դառը օշինդրում առկա սեսկվիտերպենային լակտոնների ուսումնասիրմանը և անջատմանը:

Ա. Մկրտչյանը նշեց, որ մեկ տարվա ընթացքում իր կողմից իրականացվել է.

- ՀՀ տարածքում աճող օշինդր դառը բույսի հավաք, չորացում և պահպանում
- հումքի ֆիտոքիմիական անալիզ
- դառը օշինդից սեսկվիտերպենային լակտոնների (ՍԼ) անջատում,
- անջատված ՍԼ-ի քանակական անալիզ,
- եթերային յուղի ստացում,
- եթերային յուղի հակամանրէային ակտիվության որոշում:

Նա նշեց, որ հետազոտում պլանավորվում է իրականացնել ՀՀ տարբեր մարզերից այդ բույսի հավաք, ինչպես տարվա նույն ժամանակահատվածում, այնպես էլ՝ տարբեր: Օգտագործելով տարբեր կոնցենտրացիաներով լուծիչ՝ ստանալ հանուկներ, անջատել եթերային յուղ, իրականացնել կառուցվածքային անալիզ, ստանալ ուռուցքային մոդել և որոշել բույսից անջատված ՍԼ-ի հակաքաղցկեղային ազդեցությունը, ինչպես նաև որոշել հակաօքսիդիչ և

հակամանրեային ազդեցությունը: Ա. Մկրտչյանը հավելեց, որ որոշակի դրական արդյունքեր արձանագրվելու դեպքում նպատակ ունի հետազոտությունը շարունակել որպես թեկնածուական ատենախոսություն:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Հ. Սիմոնյանը, Ս. Վարդապետյանը, Կ. Պետրոսյանը, ովքեր ողջունեցին երիտասարդ աշխատակիցներին՝ հետաքրքրությամբ և եռանդով աշխատելու համար, խորհուրդ տվեցին ընդլայնել հետազոտությունների շրջանակը:

Որոշեցին՝ դրական գնահատել Ֆարմացիայի ինստիտուտի երիտասարդ աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա.Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան